



## ԳԱԼԻԼԵՅԻ ԳԻՏԱՓՈՐՁԻ ՄԱՍԻՆ

Համարում են, որ փորձարարական ֆիզիկան ծնունդ է առել այն պահից, երբ Պիզայի համալսարանի մաթեմատիկայի երիտասարդ դասախոս Գալիլեյը Պիզայի թեք աշտարակից միաժամանակ բայ թողեց հրետագունդը և մուշկետի գնդակը: 1591 թվականն էր: Գիտափորձի օրը ուսանողների և հետաքրքրասերների բազմությունը շրջապատել էր Պիզայի նշանավոր աշտարակը: Համալսարանի ճանաչված պրոֆեսորները նման հավաքույթներին, բնականաբար, չէին մասնակցում: Նրանց կարծիքով՝ Գալիլեյի այդ արտառոց վարքը վարկաբեկում էր համալսարանը: Անբան շրջմուլիկներին հրապարակում հավաքելը վայել է ձեռնածուներին և լարախաղայներին, բայց ոչ գիտնականին: Միայն մի քանի դասախոս էր ներկա: Եվ քչերը գիտեին, որ Գալիլեյն աշտարակից վայր է նետելու զանազան առարկաներ՝ ապացույցելու համար, որ տարբեր զանգվածներով մարմինները նույն բարձրությունից ընկնում են նույն ժամանակում: Հավաքվածների մի մասը նույնիսկ հավատացել էր այն լուրին, թե մաթեմատիկայի դասախոս սինյոր Գալիլեյը ցատկելու է աշտարակից: Նույնիսկ երբ ծանր գունդը և թեթև գնդակը, միասին ընկնելով, միասին էլ հարվածեցին գետնին, հիացմունքի որևէ արտահայտություն չլսվեց: Ընդհակառակը, Գալիլեյի ձեռնարկն արհամարհական արտահայտությունների և տարակուսանքի տեղիք տվեց: Մի՞թե նա իսկապես կարծում է, թե աշտարակից ինչ-որ գնդեր նետելով կարելի է հերքել Արիստոտելին: Մի դրան տեսեք՝ գիտական աստիճանից զուրկ այդ նորելուկ դասախոսին:

Գալիլեյը շրջապատված էր լուռ թշնամանքով, և հաջորդ տարի նրա պայմանագիրը Պիզայի համալսարանի ղեկավարության հետ չշարունակվեց: Բայց ոչ ոք չգիտեր, որ Գալիլեյին սպասում էին Պադուայում. նրան նշանակել էին Պադուայի համալսարանի մաթեմատիկայի պրոֆեսոր: